

Մ. Մ. ԹԵԼՈՒՆՑ
ТЕЛУНЦ М. М.
TELUNTS M. M.

ԽՆԴՅՈՐԵՍԿ
(Պատմաաշխարհագրական համառոտ ակնարկ)

ХНДՅОРԵՍԿ
(Краткий историко – географический очерк)

KHNDZORESK
(A short historical- geographical essay)

Մեծ Հայքի Սյունիք «աշխարհի» կազմում գտնվող, հնագույն բնակավայրերից. մարդկության. քաղաքակրթության հնագույն բնօրբաններից մեկի՝ Խնձորեսկի մասին այս համառոտ ակնարկը նպատակ ունի սոսկ համառոտակի ծանոթացնել Խնձորեսկի մասին բոլոր նրանց ովքեր այս կամ այն հանգամանքների բերումով առնչվել կամ ցանկություն ունեն առնչվել «Բաց Երկնքի տակ գտնվող թանգարան» հիշեցնող ժայռափոր մի ամբողջ բնակավայրի՝ իր ժամանակին Արևելյան Հայաստանի ամենամեծ գյուղի հետ: Իր ժայռափոր կերտվածքով Խնձորեսկն առավել վառ՝ ակնառու ծեռվ է պատկերում հայ ժողովրդի հազարամյակների պատմությունը՝ գոյատևման համար պայքարի նրա կամքը:

Նվիրվում է Խնձորեսկի պաշտպանության ու Արցախ-Սյունիքյան ազատամարտի ժամանակ զոհված Խնձորեսկցիների հիշատակին:

Տպագրվում է Ներքին Խնձորեսկի համայնքի ղեկավար (գյուղապետ) **Մարտուն Արգանյանի** նյութական աջակցությամբ:

Երկու խոսք

Պատմաաշխարհագրական համառոտ ակնարկը նվիրված է Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակավայրերից մեկին՝ Խնձորեսկին: Դա ոչ թե հրաշք «Գեղարդի» պես սոսկ մի ժայռափոր կառույց է, այլ ավելին՝ **մի ամբողջ ժայռափոր գյուղ՝ խոշոր բնակավայր**. Ժամանակակից ընկալմամբ անառարկելիորեն «**Թանգարան բաց Երկնքի տակ**»¹:

Սա պատմաաշխարհագրական նպատակադիր, համակողմանի ու մանրակրկիտ հետազոտություն չէ, այլ համառոտ ակնարկ՝ սոսկ հերթական հիշեցում իր պատմությամբ ու ներկայով առեղծվածային ու գայթակղիչ Խնձորեսկով հետաքրքրվելու համար: Խնձորեսկը՝ առավել կամ պակաս չափով անարատ մնացած հայկական հնագույն բանակավայրերից է. **մեր պատմության նյութականացված հնագույն դասագրքերից...** Խնձորեսկն առեղծված է իր անցյալ

¹Տե՛ս **Տելунց Մ. Մ.**, Из Истории освободительной борьбы Сюника и Арцаха. Некоторые аспекты самоопределения НКР. Изд. “Эдит Принт”, Ереван, 2006, с. 29.

ու ներկա կեցվածքով. ինչպես որ առեղջված են աշխարհահոչակ իտալացու «Մոնա Լիզան»² և ուրիշ գլուխ-գործոցներ...

Կարծում ենք, որ վերջին շրջանում հանուն «բիզնեսի» սքողված կամ անսքող՝ անթաքույց նպատակով հետաքրքրվելով Խնձորեսկով, ՀՀ կառավարությունը, բնականաբար նաև Եվրոպական մշակութային կառույցները այնուամենայնիվ կփորձեն Խնձորեսկուն տեսնել նաև՝ թերևս ամենից առաջ հոգևոր՝ քաղաքակրթության համար, քաղաքակրթության՝ մարդկության պատմությունը ամենավաղ ժամանակներից սկսած, ճանաչելու համար ակնառու նշանակություն ունեցող նրա մեծագույն արժեքը... Այս առումով կարևորվում է նաև ՀՀ կառավարության որոշումը Սյունիքի մարզի Գորիսի տարածաշրջանի մի շարք բնակավայրերի՝ այդ թվում «Հին Խնձորեսկի» պահպանման ու այն որպես համամարդկային նշանակություն ունեցող մշակութային արժեքի համաշխարհային հանրությանը ներկայացնելու գործում³:

Խնձորեսկով չիհանալ, չգայթակղվել, չհափշտակվել չես կարող, բայց այն լուրջ ու համալիր գիտահետազոտական, հատկապես հնագիտական նպատակասլաց ուսումնասիրությունների կարիք ունի (թեպետ ՀՀ ներկայիս տարածքում այդ առումով նա բոլորովին էլ եզակի բնակավայր չէ՝ ի բացառյալ նրա յուրահատուկ ու ամբողջական ժայռափոր կերտվածքի):

Խորհրդային տարիներին անուրանալիորեն վերելք ապրած Խնձորեսկն այսօր գտնվում է բարդ գործընթացների հոլովույթում, իսկ «բիզնեսի» զարգացումն ու «գլոբալիզացիան»՝ ինչպես միջնադարում ունիթորիզմը, առավել ևս «փողի համար խելակորույս. խելացնոր պայքարը» կարող է անդառնալիորեն վնասել Խնձորեսկի (բնականաբար ոչ միայն Խնձորեսկի) ազգային պատմական կերտվածքին՝ եթե իմաստավորված մոտեցում չդրսենորվի առկա հիմնախնդիրների համալիր լուծման բարդ գործընթացում... Մեր օրերում Խնձորեսկը ևս հարկադրված է պայքարելու հոգևոր ու մարդկայինը պահպանելու համար...

Յուսանք որ ապագայում ամեն ինչ շատ ավելի լավ կլինի...

* * *

Այսօր Սյունիքում, նաև ամբողջ ՀՀ-ում չափազանց՝ կենսական կարևորություն ունի արդյունաբերության ստեղծումը. Երկիրը առևտրա-չարչիական կցորդից

² Դժվարանում ես մինչև վերջ ընկալել «Մոնա Լիզայի» գաղտնախորհուրդ ու հմայիչ ժախտը՝ դրա գաղտնիքը՝ առավել ևս համոզիչ ձևով բացատրել այն. բայց չհմայվել ու չձգտել նրան չես կարող...

³ Չնայած առաջմ ոչ մի առավել կամ պակաս չափով նշանակալից գործնական քայլ չի արվել:

առավել կամ պակաս չափով զարգացած արդյունաբերական երկիր դարձնելը. Երկրում **ապրանքային** արտադրության՝ արդյունաբերության կազմակերպումը: Այս առումով պետք է հատկապես նկատի ունենալ, որ Սյունիքի ընդերքը, մասնավորապես, հարուստ է օգտակար հանածոներով՝ պղինձ, երկաթ, ոսկի (նույնիսկ ուրան) և այլն. և եթե այդ արդյունահանվող հանքանյութի գոնե կեսը (իսկ ինչու ոչ՝ ամբողջը) թողնվի տեղում՝ կազմակերպելով ապրանքային արտադրություն (և ոչ թե ամբողջությամբ կրվեն օտար շուկաներ հիմնականում հարստացնելով նի քանի օլիգարխների). ապա դրա նշանակությունը երկրի, բնականաբար հատկապես տարածաշրջանի համար, անկասկած հսկայական կլինի թե՛ տնտեսական, թե՛ ռազմական՝ երկրի անվտանգությունը հուսալիորեն ապահովելու առումով: Այն էապես կնպաստի նաև **երիտասարդությանը** տեղում պահելու¹, արտագաղթը բացառելու կամ այն էապես կրծատելու գործին: Կարծում ենք, որ ամենից առաջ հենց այս նպատակին պետք է ուղղվեն մեր երկրի, մեր ժողովրդի՝ հատկապես Սփյուռքի միջոցները՝ օգնությունը, «Հայաստան» հիմնադրամի ջանքերը և այլն: Անշուշտ առաջին հերթին հենց առասպելական կարծ ժամկետում միլիոնատերեր, միլիարդատերեր (դոլարներով, եվրոներով...) դարձած մեր նորահարուստները պետք է իրենց միջոցները ներդնեն տեղերում, հատկապես այսպես կոչված հեռավոր, ծայրանասային մարզերում, շրջաններում՝ գյուղերում գործարաններ (մեծ և փոքր) կառուցելու, տեղում ապրանքային կայուն արտադրություն կազմակերպելու գործում: Երկիրը կարող է հարուստ և հզոր լինել իր հարուստ **ժողովրդով** և ոչ թե երկրի բնակչության ընդամենը 8-10%-ը կազմող **գերհարուստներով**...

Հարստացնենք ժողովրդին և նա՝ ժողովուրդն էլ կլուծի երկրի ու պետության առջև դրված հիմնախնդիրները: Այլ՝ հուսալի ճանապարհ չկա: Այս կտրվածքով հատուկ կարևորություն է ստանում հանրապետության համար ռազմաստրատեգիական կենսական նշանակություն ունեցող Սյունիքի զարգացումը՝ հատկապես **տեղում արդյունաբերության**, այդ թվում **գյուղատնտեսական**, կազմակերպումը:

Չիշենք, որ Արցախյան համազգային-պատմական խնդիրը առավել կամ պակաս հաջողությամբ լուծեց հենց զարգացած արդյունաբերություն, նաև մշակույթ, ունեցող

¹ Բնական ռեսուրսներով ՀՀ ամենահարուստ Սյունիքի մարզում երիտասարդության գործազրկության մակարդակը երկու անգամ բարձր է հանրապետական միջինից. իսկ վերջին շրջանում նկատելի աշխուժացում է ապրում արտագաղթը. արտագնա աշխատանքը զանգվածային մեկնումները (ըստ որում, ցավոք, նաև խնձորեսկից):

Խորհրդային Հայաստանում ձևավորված սերունդը. իսկ այսօր մեր երիտասարդության և նրա նշանակալից մասի ուղեղներն «ամայանում» են գործազրկությունից. պարապությունից, չարչիությունից, աղքատությունից, թմրամոլությունից, մարմնավաճառությունից, սոցիալ-տնտեսական իրողություններից դրդված անբնականորեն ծավալվող քրեածին բնազդներից և «նոր կարգերի» բերած մեզ հայտնի հասարակարգը կազմալուծող մյուս բացասական երևույթներից, գործընթացներից... Հատկապես աշխարհաքաղաքական անբարենպաստ վիճակում գտնվող մեր փոքրիկ երկիրն ու նրա պետությունը չի կարող տևական ժամանակ հուսալիորեն գոյատևել առաջնորդվելով սոսկ մեր նախընթաց արժեքների, ազգային-պատմական սրբությունների մասին հիշողություններով ու այլ հայտնի կարգախոսներով...

Միայն **զարգացած արդյունաբերություն՝** այդ թվում, բնականաբար, սեփական-ռազմական (անշուշտ իր չափով ու հնարավորություններով), ունեցող երկիրը՝ առավել ևս Հայաստանի վիճակում գտնվող, կարող է իր համար հնարավորինս հուսալի ներկա ու ապագա ապահովել: Ոչ միայն ազգային-հանրային միջոցների հաշվին գերհարստացած մեր օլիգարխների հսկայական միջոցները, կամ գոնե դրանց մի նշանակալից մասը, այլ և նաև, բնականաբար, համաժողովրդական՝ հանգանակություններով¹ և այլ եղանակներով հավաքվող, պետք է ուղղվեն հենց այդ նպատակին և ոչ թե փոշիացվեն...

Կարծում ենք, որ երկրի ու պետության առջև ծառացած հիմնախնդիրների, դրանց համալիր լուծման նկատմամբ **իմաստավորված** համապետական մոտեցման ու գործելակերպի համատեքստում միայն հաջողությամբ կարող են լուծվել նաև մեր տարածաշրջանում՝ Սյունիքում ու պատմական Խնձորեսկում առկա՝ հրատապ լուծման կարոտ կենսախնդիրները:

**Մ. Ա. Թելունց
ՀՅ Սյունիքի մարզ, գ. Խնձորեսկ,
հեռ. 094 96 07 08**

¹ Ես հասկանում եմ, որ օր՝ Արցախի ճանապարհների, ջրի համար և այլն, միջոցները հավաքելը և Տարևի ճոպանուղին էլ վատ չեն. բայց դա չէ հիմնախնդիրը. բացի այդ այնքան էլ «բարի գործ» չէ երկրի ամբողջ հարստությունը՝ մակերևույթն ու ընդերքը մի քանի հոգու կողմից անխիղճ կողոպուտի ենթարկելու պայմաններում ձեռքբեր մեկնած այս աղքատ, ուրիշների ստացած ու ծախսած փողերի համար՝ պատճառով. արդեն ավելի քան 4 միլիարդ դոլլարի պարտքի տակ ընկած, խրոնիկական գնածից ու հարկային վճարների բեռից կքած ժողովրդից միջոցներ հավաքելը... Իհարկե խնդիր է նաև թե որքան արդյունավետորեն են այդ միջոցներն օգտագործվում...

ԽԱՆՁՈՐԵՍԿ

Պատմաաշխարհագրական համառոտ ակնարկ

Թե՛ Յին Խնձորեսկը և թե՛ նորը՝ ՀՀ դարի 50-ական թվականներին տեղափոխված, գտնվում են պատմական Սյունիք «աշխարհի»- Մեծ Յայքի 15 նահանգներից մեկի՝ Յաբանդ¹ գավառի (հետագայում ՅևՍՅ Գորիսի շրջանի). ներկայիս Սյունիքի մարզի) տարածքում՝ ՅՅ հարավ-արևելյան մասում: Յին Խնձորեսկը գտնվում է արևմուտքից արևելք մոտ 3կմ երկարությամբ ձգվող լեռնահովտի աջ ու ձախ եզրերին. կտրտված խորը ձորահովտներով, շրջապատված ժայռազանգվածներով: Աչքի է ընկնում բարեխառը կլիմայով ու բերքառատությամբ: Յին Խնձորեսկն ունեցել է դժվարամատչելի ճանապարհներ՝ ըստ էության արահետային: Ունեցել է մի շարք հայտնի բնական աղբյուրներ, որոնց մի մասը պահպանվել է: Խորհրդային տարիներին հիմնական ճանապարհները վերակառուցվել, բարեկարգվել են, դարձել անհամեմատ մատչելի՝ այդ թվում սայլային և ավտոմոբիլային տրանսպորտի համար: Նոր Խնձորեսկը գտնվում է Յին Խնձորեսկից 2-3 կմ արևելք՝ հեռավորության վրա Գորիս քաղաքից 8 կմ արևելք՝ Գորիս-Ստեփանակերտ խճուղուց աջ՝ խոր ձորի զարիթափ լանջերին և սարահարթի վրա: Խորհրդային տարիներին կառուցվել են մշակութային և այլ օբյեկտներ՝ դպրոցներ՝ հանրակրթական և երաժշտական, մշակույթի տուն, հիվանդանոց, գործարան և այլն: Ունեցել է խոշոր կոլեկտիվ տնտեսություն՝ 1928-29թ.-ից, հետագայում՝ 1976 թվականից՝ պետական տնտեսություն՝ 10 հազարից ավելի մանր եղջերավոր անասուններից և մի քանի հազար խոշոր եղջերավոր անասուններից բաղկացած ֆերմաներ: Մշակվել են բազմաբնույթ գյուղատնտեսական կուլտուրաներ: Խնձորեսկի կոլեկտիվ և պետական տնտեսությունները հատկապես զարգացում են ապրել նրա երկարամյա վաստակաշատ ղեկավար, ՅևՍՅ Գև-ի մի շարք գումարումների պատգամավոր Միրաք Բունիաթի Յամբարձումյանի (Թելունցի), հետագայում նաև Յայկ Ալեքսանյանի, Վազգեն Բաղդաջուլյանի, Շամիսալ Մանվելյանի, Միշա Ղալդունցի

¹ Պատմական անունների՝ հատկապես տեղանունների ծագումնաբանական բացատրությանը պետք է շատ զգույշ նոտենալ. ընկ. Ս. Յախվերդյանի և մյուսների բացատրություններն արտաքին հայացքից որքան էլ որ հրապուրիչ լինեն, կարող են լուրջ խճողումներ ստեղծել... ի դեպ անգամ Յը. Աճառյանը և մյուսները ևս այդ հարցում բավական զգույշ են եղել...

և մյուսների ղեկավարնան տարիներին: Գյուղում կառուցվել են քարաշեն երկիարկանի տներ, փողոցներ, անցկացվել էլեկտրական լուսավորություն. շուրջ 9 կմ. հեռավորությունից խմելու ջուր է բերվել՝ խողովակաշար անցկացվել գյուղ և:

ճշգրիտ որոշել Խնձորեսկի (Յին) տարիքը՝ դժվար է, ինչպես և դժվար է Յայկական լեռնաշխարհի, անշուշտ, նաև Սյունիքի հնագույն բնակավայրերի տարիքը որոշելը: Ակնհայտ է, սակայն, որ Յայկական լեռնաշխարհի մյուս բնակավայրերի՝ հնավայրերի պես **Խնձորեսկը** ևս **մարդկության հնագույն բնակավայրերից** է. մասնավորապես դրա օգտին է խոսում նրա երկրաբանական կառուցվածքը, դիրքը, քարանձավային համակարգը և այլն: Իսկ գիտական տվյալներով ընդունված է ասել, որ “*homo habilis*”-ը՝ աշխատանքի գործիքներ պատրաստելու ունակ մարդը, ծագել կամ առանձնացել է կենդանական աշխարհի մյուս ներկայացուցիչներից շուրջ երեք միլիոն տարի առաջ (կան նաև այլ թվեր՝ 1-ից 3 միլիոն, նաև՝ անգամ, 100-150 միլիոն և ավելի տարիներ առաջ, ևն): Յայտնի է, նաև որ Յայկական լեռն աշխարհը, որի մի մասն էլ կազմում է Սյունիքը, Սյունիքի մեջ մտնող Խնձորեսկը և մյուս., հնագույն քաղաքակրթությունների՝ Աքքաղի, Շումերի, Բաբելոնի սահմանակիցն՝ հարևանն էր և պատահական չէ, որ Միջագետքում տեղի ունեցած՝ սկզբնավորված, համաշխարհային ջրհեղեղից հետո նրա բնակիչներն ապաստանել են Յայկական լեռնաշխարհում՝ նրա հարավում գտնվող Արարադ (և ոչ թե Մասիս- Արարատ) կամ Արարատ-Մասիս լեռան վրա՝ որը Նոյի մասին, ինչպես նաև ջրհեղեղի մասին հիշատակող հին շումերական առասպեկտների պատմական հենքն է դարձել: Յայկական լեռնաշխարհում տոհմացեղային և ցեղային-պետական միավորումների (Արատտա, Արմանի) մասին տեղեկությունները գիտնականները վերագրում են մ.թ.ա 3-րդ հազարամյակին:

Ավելի ուշ Խնձորեսկը հիշատակվում է՝ տարբեր առիթներով հայ պատմիչների երկերում: Այսպես օր՝ Ստեփանոս Օրբելյանը (13-րդ դարի երկրորդ կես և 14-րդ դարի սկիզբներ) Խնձորեսկը (նաև Խնձորեակ, Խնձորեկ ևն) հիշատակում է Սյունիքի Յաբանդ գավառի կազմում (Տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, «Սովետական գրող» հրատ., Երևան, 1986, էջ 399): Դա Յաբանդի 59 գյուղերից մեկն էր: Դրանից ավելի ուշ Աբրահամ Կրետացի հայոց կաթողիկոսը Մուղանի դաշտավայրում Նադիր Շահի թագաղորությանը մասնակցելուց հետո վերադառնալով Էջմիածին (1736թ.). անցնելով Խնձորեսկով արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Խնձորեսկի

մասին՝ մասնավորապես, նշելով որ Խնձորեսկը (բնագրում՝ Խնձորեկ) գտնվում է «քարաժեռ լերանց մեծամեծաց» մեջ, ունի «անբավ բարձրություն», «նեղանցուկ ճանապարհներ», մարդիկ բնակվում են ժայռափոր բնակավայրերում՝ որտեղ բարձրանում էին թոկով՝ պարանով և այլն: Ըստ Կրետացու Խնձորեսկը շատ բնակիչներ, տներ է ունեցել, սակայն բնակիչներից շատերը զոհվել են օսմանյան թուրքերի և քրդական ցեղերի հետ կրիվներում և ներկայումս՝ Կրետացու ժամանակ, ընդամենը մոտ 500 կամ ավելի պակաս տուն ուներ Խնձորեսկը. «Իսկ տունք նոցա (Խնձորեսկի-Մ. Թ.) քանդեալք էին 'ի զօրաց Օսմանցոց և 'ի գող աւազակ Քրդաց Ղարայչօռլուց: Նախ կային Եճ (500-Մ. Թ.) տուն¹ 'ի Խնձորեկ գեղն, բայց այժմ սակաւացեալք էին՝ զի բազում սպանեալք էին 'ի Թուրքաց. քանզի Փաշայք զօրօք իւրեանց քանիցս Եկեալ էին 'ի Վերայ նոցա, և ոչ կարացին մուտ առնել, այլ պատերազմեալ ընդ միմեանս՝ յետ դառնային ամօթով...» (Տե՛ս Աքրահամ Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցին իւրոց և Նատր-Շահին պարսից, ՈՅԺԹ-1870, Ի տպարանի սրբոյ կաթողիկե - Էջմիածնի, Ի Վաղարշապատ, էջ 74-75): Կրետացու տեղեկությունն այն մասին, որ թշնամիները՝ տվյալ դեպքում մահմեղականները ոչ մի անգամ չեն կարողացել մտնել Խնձորեսկ, նրա բնակիչների հերոսական դիմադրության, պայքարի շնորհիվ, անկասկած արժեքավոր է: Պատահական չէ նաև, որ Պետրոս I-ի Պարսկական (կամ Կասպիական) արշավանքով ոգեշնչված Սյունիքի և Արցախի 1722-1730թթ ազատագրական պայքարի տարիներին և Խնձորեսկն այդ պայքարի հենակետերից էր (Տե՛ս օր.՝ Տելոնց Մ.Մ., Իз истории освободительной борьбы Сюника и Арцаха. Некоторые аспекты самоопределения НКР. (По рекомендации кафедры Политологии Ереванского Гос. университета), Изд. “Эдит Принт”, Ереван 2006, с. 29): Անշուշտ ցավալի դեպք էր հայ ազատագրական շարժման հայտնի գործչի, հաղթանակած զորավարի՝ Մխիթար Սպարապետի սպանությունը Խնձորեսկում, հավանաբար թուրք գործակալների հրահրմամբ (Տե՛ս Դավիթ Բեկ կամ Ընտիր պատմություն պատերազմացն Ղափանցոց, ԵՊՀ հրատ., Երևան, 1992, էջ 76-77), սակայն, բնականաբար, դա չի կարող ստվեր գցել այդ գյուղի, նրա բնակիչների հերոսական պատմության վրա: Ի դեպք «Դավիթ Բեկի...» պատմությունում կամ «Ընտիր պատմություն...»-ում Խնձորեսկը նշված է «Խնձորեսք» և «Խնձորէկ» անվանումներով (էջ 77, 108): Պետական Ալիշանի

¹ Դայտնի չէ թե մեր հայրենակից հայտնի բանաստեղծ- հրապարակախոս Արկադի Ծատուրյանը որտեղից է վերցուել «3000 տուն բնակչությունը՝ 3000 թիվը. տես «Սյունյաց Երկիր» 15 հունիսի 2012թ.:

«Սիսական» - ում նշվում է «Խնձորեսկ» (Տե՛ս Սիսական, 1893, Վերատպություն, Երևան 2009, էջ 263): Ուշագորավ է նաև այն փաստը, որ Մեծ Հայքի «Բարձր Հայք» նահանգում՝ Երզնկայի Էրզրումի գավառներում Խնձորեկ, Խնձորիկ և այլն՝ նման անուններով 6 գյուղ է հայտնի: **Խնձորեսկ** անունով գյուղ է հայտնի Էրզրումի նահանգի Երզնկայի գավառում, Բոլոնորի գավառում, Խնձորեք անունով՝ Բիթլիսի նահանգում, Սասունի Փսանք գավառակում: Դա բավական տարածված անուն է և չի բացառվում ծագումնաբանական ազգակցությունն Արևմտահայ և Արևելահայ անվանումների միջև (Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանի տեղանունների բառարան, հ. 2, ԵՊՀ իրատ, Երևան, 1988, էջ 478-479)¹: Խնձորեսկը հետագա տարիներին, անշուշտ, համալրվել է ռուս-պարսկական, ռուս-թուրքական պատերազմների արդյունքում Արևելյան Հայաստան գաղթած հայերով (հատկապես 1826-28, 1828-29թթ.¹ պատերազմների արդյունքում), բայց նրա բնիկներին ու «նորաբնակներին» առանձնացնելն անպտուղ գործ է....:

Խնձորեսկը, որքանով ես կարող եմ իմ դիտարկումներով գնահատել, ազգային-ազատագրական պայքարում իրոք միշտ էլ ակտիվ դեր է ունեցել. գյուղին, նրա բնակիչներին հատուկ է ըմբոստությունը, հոգեբանական առունով նրանց պատմությունը գերազանցապես բնութագրվում է երկու հիմնական ուղղություններով՝ ազատագրական պայքար և **հանրային մտածողություն** (այս վերջինը մենք կանվանենք աստվածաշնչային, կոմունիստական. թե ինչ. դա ես զգացել եմ): Խնձորեսկի **ինքնատիպ** դրական գծերից պետք է համարել **սեփական** հողին **կառչած** մնալը. եթե ամբողջ հայ ժողովուրդն այս տարիներին փախչում է սեփական երկրից՝ արդեն ունենք 1 միլիոնից ավելի արտագաղթողներ և շարունակվող արտագաղթ, Խնձորեսկում **ընդհանուր առմամբ** նման երևույթ չկա. ըստ երևույթին ի տարբերություն մեր ժողովրդի մյուս հատվածների նրանք հասկանում են, որ ոչ թե ժողովուրդը պետք է փախչի սեփական, այսօր արդեն «անկախ» երկրից, այլ պետք է **մի քանի մեղավորներին քշի երկրից՝** նրանց, ովքեր երկիրն ու ժողովուրդին հասցրել են այս վիճակին...

¹ Խնձորեսկ բառը բացատրելուց ես առայժմ գերծ եմ մնում. հնարավոր է, նաև որ ճիշտ են «Խոր ձոր», կամ «Խնձոր», «Խնձորուտ» հիմքերից ծագումը:

* * *

Ըստ տեղեկությունների Խնձորեսկն արդեն 20-րդ դարի սկիզբներին ունեցել է շուրջ 1800 տուն 8300 բնակիչներով (Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, էջ 749): 1913թ-ին ունեցել է 27 խանութ, 3 ներկատուն, կաշեգործային տներ, 7 դպրոց (առաջին դպրոցը՝ նոր ժամանակներում՝ 1871 թվականից¹): Այստեղ առաջինն է ստեղծվել (1919թ-ի ապրիլ) կոմունիստական – կուսակցական կազմակերպությունը: Առաջին Հանրապետության տարիներին Խնձորեսկի, նրա բնակիչների հոգեբանական, սոցիալ-քաղաքական միտվածությունը եղել է դեպի սոցիալիստական-հանրային մտածողությունը: Մասնավորապես դրա հետևանքը պետք է համարել Խնձորեսկի շատ «հանրային-սոցիալիստական մտածողությամբ» գործիչների գնդակահարումը (Թադևոս Թելունց և ուրիշներ)` փոքր ավելի ուշ հանկարծակի «բոլշևիկ» դարձած Դրոյի և մյուսների կողմից... Ակտիվ մասնակցություն է ունեցել Խնձորեսկը Հայրենական Մեծ պատերազմին (1941-1945թթ.): պատերազմին մասնակցել են 1300 խնձորեսկցիներ՝ 1100-ը որպես շարքային, մնացածը՝ սպա. 480-ը զոհվել են (Տե՛ս ՀՍՀ, հ. 5): Խնձորեսկը տվել է՝ պատերազմի ժամանակ, զորահրամանատարներ՝ գեներալներ, գնդապետներ (ԽՍՀՄ-ի հերոս՝ **Գուրգեն Արզումանյան**, գեներալ-մայոր **Սերգեյ Կարապետյան**, դիվիզիայի հրամանատար՝ գնդապետ **Ներսես Բալոյան** և ուրիշ.). բազմաթիվ շքանշանակիրներ ու մեդալակիրներ՝ Մեծ Հայրենականի ժամանակ դրսևորած քաջության համար: Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման են արժանացել **Մելիք Թունյանը, Արամայիս Հայրյանը, Միքայել Գյուլխասյանը**: Հայտնի են նաև գիտության, մշակույթի բնագավառի ականավոր ներկայացուցիչներ (արժեքավոր՝ մնայուն աշխատությունների հեղինակներ). գրողներ **Սուրեն Այվազյանը, Գարեգին Սևունցը**, կոմպոզիտորներ **Արամ և Աշոտ Սաքունցները**, ակադեմիկոս **Վահան Ղազարյանը**, ԽՍՀՄ-ի ժողովական արտիստուհի **Տարեկ Սաքահիկ** **Սազանդարյանը**, փիլիսոփայության դոկտոր-պրոֆեսոր **Աշոտ Թելունցը** (Թադևոս Թելունցի որդին), գրականագետ-դոկտոր **Բենիկ Յուզբաշյանը**, պատմաբան-գիտնականներ **Արել Սիմոնյանը, Վազգեն Բաղդազյուլյանը, Շահեն Օհանջանյանը**, գյուղատնտես և բժիշկ գիտնականներ **Գյուլխասյանները, Արմենուհի Թելունցը** (բժիշկ), կենսաբան-

¹ Առաջին դպրոցները հավանաբար գոյություն են ունեցել դեռևս 4-րդ 5-րդ դարերում՝ հայ գրերի գյուտի շրջանում՝ մանավանդ որ Սյունիքը Սեսրոս Մաշտոցի ակտիվ լուսավորական գործունեության՝ հայ գրի և գրականության տարածման, շրջաններից էր:

գիտնական **Սուրիկ Փանդունցը**, գիտ. թեկնածուներ՝ փիլիսոփա **Անահիտ Թելունցը**, իրավագետ և պատմաբան **Մալիկ Թելունցը**, բանաստեղծներ **Վլատիմիր Բաղդագյուլյանը**, **Արկադի Շատուրյանը** և ուրիշներ: Խնձորեսկի շատ զավակներ ակտիվ մասնակցություն են ունեցել նաև 20-րդ դարի 80-ական թվականների վերջերին և 90-ական թվականների սկիզբներին ծավալված Արցախյան գոյամարտին ու ՀՀ սահմանների պաշտպանությանը՝ աղբքեցանական ազրեսիային դիմակայելու համար մղվող համաժողովրդական պայքարին. նրանցից շատերը հերոսաբար զոհվել կամ ծանր վիրավորվել են իրենց վաղնջական հողերը պաշտպանելիս: Նրանց և Հայրենական Մեծ պատերազմում զոհված հերոսների հիշատակը հավերժացնող հուշարձան-թանգարան է կառուցվել (սկզբնապես Հայրենական մեծ պատերազմում զոհված խնձորեսկցիների հիշատակին) նոր Խնձորեսկում:

* * *

Պատմական Խնձորեսկում (Հին Խնձորեսկում) պահպանվել են նաև միջնադարյան մի շարք հուշակոթողներ՝ Հին՝ Երկրաշարժից ավերված բերդ («Միսիթար Սպարապետի բերդ»), Ս. Ս. Թադևոս և Յոհվանի եկեղեցիները (17-րդ դ՝ համարյա անվետար վիճակում՝ բայց ցավոք չգործող), «Անապատ» դպրոց-եկեղեցու ավերակները, հին առյուտիններ և ուրիշներ¹: Գյուղը ներկայումս՝ 2010թ., ունի 516 ծուխ, 2300 բնակիչներով (ըստ՝ գյուղապետարանի հայտնած տեղեկության): 1831թ.-ին Խնձորեսկը ունեցել է 1342 բնակիչ, 1939թ.-ին՝ 2980 բնակիչ, 1959թ.-ին՝ 1992 բնակիչ, 1979թ.-ին՝ 1820 բնակիչ, իսկ 20-րդ դարի սկիզբներին, ինչպես արդեն նշել ենք, ունեցել է 8300 բնակիչ՝ շուրջ 1800 տուն (Տե՛ս Հայաստանի և հարակից շրջանի տեղանունների բառարան, հ.2, էջ 748-749): Ինչպես

¹ Որոշ հետաքրքրություն է ներկայացնում Հին Խնձորեսկի երկու հատվածները իրար միացնող՝ անդոդախոր կիրճ՝ ձորի վրայով անցկացված **լարային կամուրջը**: Խնձորեսկի հմայքը՝ պատմագիտական արժեքը սակայն՝ անկասկած, նրա հնության՝ մասնավորապես ժայռափոր կերտվածքի ու պատմության մեջ է: Ենթադրվում է, որ Խնձորեսկի վարչական տարածքի մեջ գտնվող «Կուրաթի կետ» և մի շարք այլ վայրեր դեռևս մ.թ.ա. գործող բնակավայրեր՝ անգամ թագավորանիստեր, իշխանանիստեր՝ պետական մակարդակի կենտրոնատեղիներ՝ կենտրոններ են եղել: Ի դեպ «Կուրաթի կետ» (բնակիչները նաև անվանում են «Գետի այն կողմը» («Կետին են դոլը») այսօր էլ բնակավայրի կառուցման, բնակության համար ամենահարմարավետ ու բարեբեր տարածքն է՝ մանավանդ նոր (ոչ թե ներքին կամ 2-րդ խնձորեսկի) Խնձորեսկի տարածքի համեմատ: Այդ և գյուղի մի շարք այլ տարածքներ կարիք ունեն նաև հնագիտական լուրջ ուսումնասիրությունների՝ մասնավորապես նկատի ունենալով հնագույն տիպի գերեզմանատների՝ գերեզմանաբարերի առկայությունը. ճիշտ կլիներ, որ այդ աշխատանքներն ընդգրկվեին ՀՀ կառավարության հայտնի որոշման մեջ:

ՀՅ մյուս բնակավայրերում այստեղ ևս նկատվում են սոցիալ-տնտեսական վտանգավոր՝ սոցիալական դաշինքը՝ միաբանությունը խախտող շերտավորումներ՝ որպես երկրում տեղի ունեցող՝ «Վերևից եկող» նման՝ հայտնի գործընթացների անխուսափելի հետևանք: Գործազրկությունը, մյուս բացասական՝ հակասոցիալական երևույթներն այստեղ ևս իրենց արմատներն են ձգում՝ վտանգավոր տարածում ստանալով:

Խնձորեսկը, որը Արևելյան Հայաստանի ամենամեծ գյուղն էր, տևական ժամանակ Արևելյան Հայաստանի կազմում գտնվել է պարսկական տիրապետության տակ՝ մտել Ղարաբաղի խանության կազմի մեջ և 1805թ-ի մայիսի 14-ի քյուրակչայի պայմանագրով միացել Ռուսաստանին (մինչև Թուրքմենչայի 1828թ՝ փետրվարի 10-ի պայմանագիրը, երբ Ռուսաստանին միացան նաև Երևանի ու Նախիջևանի խանության տարածքները): Թեպետ Արևելյան Հայաստանի որոշ բնակավայրերի պես Խնձորեսկի մի շարք տարածքներ՝ դաշտավայրեր և այլն, ևս կրել են (և պահպանվում են՝ երբեմն օգտագործվում են) օտար՝ թուրք - պարսկական անվանումներ («Դուզուեն չխուր», «Քարդաշ», «Չինգիզամի» և այլն), **սակայն բնակիչների բնակչության էթնիկական կազմը օտար ազդեցության չի ենթարկվել.** ամբողջությամբ պահպանել է իր ազգային ինքնատիպությունը՝ դեմքը: Բնակիչները՝ թե՛ տղամարդիկ և թե՛ կանայք աշխատասեր են, աչքի չեն ընկնում կրոնապաշտությամբ, առավել ևս կրոնական կույր մոլեռանդությամբ: Այս և մի շարք այլ հանգամանքներ իհմք են տալիս ենթադրելու, որ բնակչության տեղաշարժերի՝ ներգաղթ և այլն, պայմաններում անգամ Խնձորեսկում միշտ էլ գերակշռել են նրա նախաբնիկերը՝ աբորիգեն հայերը՝ խնձորեսկցիները:

Հավելված
Համառոտ պատմական տեղեկություն
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Հին Խնձորեսկ գյուղում գտնվող Մխիթար Սպարապետի
տապանաքարի մասին

Սյունիքը և Արցախը՝ որի՝ Արցախի (Ղարաբաղի) մի մասն է կազմում ներկայիս Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը, հայկական վաղնջական մարզերը՝ հողերն են:

18-րդ դարի 20-ական թվականների սկզբին Հայաստանի արևելյան մասը, այդ թվում Սյունիքը և Արցախը, գտնվում էին Իրանի (Պարսկաստանի) լծի տակ: Պարսկաստանը 1722թ. հոկտեմբերից նվաճվեց աֆղանների կողմից: Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում ստեղծվեց անիշխանական վիճակ. Օսմանյան թուրքերը պատրաստվեցին զավել Անդրկովկասը: Իր հերթին Ռուսաստանի սահմաններին թուրքերի մոտենալը կանխելու համար Պետրոս I-ը սկսեց իր պարսկական արշավանքը՝ 1722-23թթ., խոստանալով նաև աջակցել հայերին ու վրացիներին ազատագրվելու պարսկական լծից: Դա խրախուսեց նաև այդ ժողովուրդներին և հայերը ավելի վստահ զինված պայքար սկսեցին պարսիկ և տեղական մյուս մահմեդական զավթչների դեմ՝ ազատագրելով Արցախի և Սյունիքի տարածքների զգալի մասը: Սակայն չնայած հերոսական պայքարին նրանք չկարողացան երկար դիմադրել 1725-26թթ. Սյունիք և Արցախ ներխուժած, պարսիկներից անհամենատ հզոր օսմանյան թուրքերի մեծաքանակ բանակներին և ապստամբությունը՝ ազգային-ազատագրական պայքարը, 30-ական թվականների սկզբներին պարտություն կրեց: Տարբեր պատճառներով չստացվեց նաև Պետրոս 1-ի խոստացած ռուսական օգնությունը: Հայ ազատագրական պայքարը գլխավորում էր զորավար Դավիթ Բեկը, իսկ նրա մահից (1728) հետո մինչ և 1730թ.՝ **Մխիթար Սպարապետը**: Խնձորեսկը որպես Սյունիքի ամուր վայրերից մեկը՝ իր քաջարի բնակիչներով, հանդիսանում էր ազատագրական պայքարի կենտրոններից մեկը, ուստի Մխիթար Սպարապետը թուրքերի դեմ հաղթական ճակատամարտից հետո կարծ ժամանակով, հանգրվանեց Խնձորեսկում և որտեղ էլ սպանվեց թուրքական գործակալների հրահրմամբ:

Մխիթար Սպարապետի տապանաքարի վրա իին հայերեն լեզվով գրված է, որ այն դրված է ի հիշատակ իշխանությամբ օժտված, Գանձակեցի Մեծ Մխիթարի, որ նահատակվեց երիտասարդ տարիքում: Տապանաքարի երկարությունը՝ 1.53 սմ,

բարձրությունը՝ 60 սմ, լայնությունը՝ 40 սմ:Տապանաքարի հյուսիսային կողքին քանդակված են երեք հեծյալներ, առաջինը ձեռքին ունի կեռ սուր, երկրորդը՝ հրացան՝ դեպի ետ դարձրած, երրորդը, որ գնում է դրանց առաջից, սպարապետն է, ձեռքին ունի նիզակ, որով սպանում է գալարվող վիշապին: Սպարապետին դիմավորում են երկու հետիոտն մարդիկ, առաջինի մի ձեռքին հրացան է, մյուսին՝ ծաղիկ, երկրորդը հոգևորականի զգեստով է, ձեռքին դրոշակ, որ պակվում է խաչով:

Ա. Ա. Թելունց

Պատմական գիտությունների թեկնածու

Short historical summary

About the gravestone to Mkhitar Sparapet which lies in the old village of Khndzoresk of Syunik Region of Republic of Armenia

Syunik and Artsakh: a part of which is the present days` Nagorno-Karabakh are ancient Armenian lands (marzes). In the early 20s of the 18th century the eastern part of Armenia including Syunik and Artsakh were under the Iranian (Persian) yoke. In October 1722 Persia was conquered by Afghans. An ungoverned situation was created in the Transcaucasus. The Ottoman Turks were going to conquer it Peter I, in his turn in order to prevent the Turks` approach to the Russian borders, started his Persian campagn in 1722-1723 promising to support the Georgians and Armenians to liberate themselves from the Persian yoke as well. Thus it promoted them to start an armed struggle against the Persian and other local Muslim conquerors and liberated most part of Artsakh and Syunik.

Despite the heroic struggle the Armenians weren't able to stand up to the numerous Ottoman Turkish troops which broke into Syunik and Artsakh in 1725-1726 and the plot e.i. the national liberational movement was defeated in the early 30s of the 18th century. The Russian help which Peter I has promised never arrived for differend reasons.

From the Armenian part the movement was led by the general commandant **Davit Beg** in 1728. Soon after he died in 1730 it was taken up by **Mkhitar Sparapet**. The village of Khndzoresk with its brave inhabitants was one of the most inaccessible places of Syunik and was considered one of the centres of national liberational movement, therefore shortly after a victorious battle against the Turks **M.S.** settled in Khndzoresk where he was assassinated by Turkish agents' instigation afterwards.

On the gravestone it is written in old Armenian that it was put in memory of glorious **M.S.** who died at an early age. The length of the gravestone is 1,53 sm, the height is 60 sm and the width is 40sm. On the northern side of it three horsemen are carved: one of them has a hooked sword in his hands, the second has a gun kept behind and the third one who is leading them is **M.S.** who has a lance in his hand and is killing the wriggling dragon. Two (pedestrians) men are welcoming the commandant. One of them has a gun in one hand and a flower in the other hand, the other man is dressed as a clergyman and in his hand has a flag which is crowned with a cross¹.

Telunts Malik

Lawyer and Doctor of History
Village of Khndzoresk of Syunik Region:
Republic of Armenia; telephone: 094 96 07 08.

¹ Translated from Armenian in to English by **Naira Safarian**.

Краткая историческая справка
О надгробной плите Мхитара Спаратета,
находящемся в селе Старом; Древнем Хнзореске
Сюникской области РА

Сюник и Арцах; частью которой является нынешняя Нагорно-Карабахская республика, исконно армянские земли — области.

В начале 20 — ых годов XVIII века восточная часть Армении, в том числе Сюник и Арцах, находилась под властью Ирана (Персии). В октябре 1722 года столицу Персии захватили восставшие афганы и свергли централизованную царскую власть Сефевидов. В Закавказье, в том числе и в Армении, создавалось безвластие. Османская Турция готовилась захватить Закавказье; персидские владения. В свою очередь Россия в лице Петра I-го, стремясь препятствовать приближению турок к рубежам России, начинает известний персидский (каспийский) поход 1722 — 23 годов; обещая армянам и грузинам содействие в освободительной борьбе против персидского ига, что воодушевило эти народы, а армяне начали вооруженное освободительное движение против персов и других местных мусульманских захватчиков, освободив значительную часть территории Арцаха и Сюника. Однако, несмотря на героическую борьбу, они не были в состоянии долго сдерживать натиск многочисленной армии османских турок вторгшихся в 1725 — 25 гг. в Сюник и Арцах, и национально — освободительное восстание армян в начале 30 — ых годов потерпело поражение. По разным причинам русскими не была оказана обещанная помощь. Армянское освободительное движение возглавил полководец Давид Бек, а после его гибели (1728) до 1730 года Мхитар Спаратет (полководец; главнокомандующий армянскими повстанческими войсками).

Хнзореск, как одно из самых укрепленных поселений Сюника, с его бесстрашными жителями являлся одним из центров освободительного движения, потому Мхитар Спаратет во время короткой передышки после победоносной битвы с турками нашел пристанище здесь, где и был предательски убит по подстрекательству турецких агентов.

На надгробной плите Мхитара Спаратета на древнеармянском языке написано, что она возложена в память о наделенном властью Великом Мхитаре Спаратете, который погиб в молодом возрасте.

Длина надгробной плиты – 1.53 см, высота – 60 см, ширина – 40 см. В верхней части изваяны три всадника, первый держит в руке кривую саблю, второй – направленное назад ружье, третий, что идет впереди них – Спрапет, в руках у него копье, которым он убивает повернутого дракона. Спрапета встречают два пеших воина; первый держит в одной руке ружье, в другой цветок, второй в одежде священника, в руках у него увенчанное крестом знамя.

Телунц Малик Миракович

Кандидат исторических наук

Республика Армения. Сюникская область, село

Хнձоресկ, тел. сот. 094 96 07 08